ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՋԱՐԴԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ

Նարեկ Շարաֆյան

Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտի ասպիրանտ
ՀՀ, Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8
Էլ. հասցե՝ sharafyan96@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 03.01.2022, գրախոսվել է 27.01.2022,
ընդունվել է տպագրության 07.03.2022
DOI:10.53548/0320-8117-2022.1-27
ՀՏԴ: 323.28(479.25+479.24) + 947.925

Ներածություն

1988 թ. փետրվարի 27-29-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանական ԽՍՀ-ի Սումգայիթ քաղաքում տեղի են ունեցել հայ բնակչության նկատմամբ զանգվածային ջարդեր (հայտնի է նաև որպես «Սումգայիթի պոգրոմ»): Այդ իրադարձություններն ունեցել են խոր և տարաբնույթ հետևանքներ: Միևնույն ժամանակ, պատմական, քաղաքական և իրավական հարթություններում հաճախ քննարկվում է Սումգայիթում հայերի ջարդերի դատապարտվածության աստիճանը:

Սումգայիթի ջարդերի հետևանքները

Նախ, քննենք Սումգայիթի ջարդերի անմիջական հետևանքները:

1) Ֆիզիկական բռնություններ

Ըստ խորհրդային իշխանության պաշտոնական աղբյուրների՝ Սումգայիթում առանձին դաժանությամբ սպանվել են 26 հայ քաղաքացի, 6 ադրբեջանցի անձ, 400-ից ավելի անձինք վիրավորվել են և հաշմվել[1], իսկ շատերն անհայտ կորել[2]: Այդուհանդերձ, իրադարձությունների ուղղակի հետևանքների իրական ծավալը մինչ օրս հայտնի չէ: Առկա են հիմնավոր կասկածներ առ այն, որ Սումգայիթում երեք օրվա ընթացքում սպանվել է ավելի քան 110 հայ[3]: Նրանց հիմնական մասը սպանվել է խոշտանգումներից հետո ողջակիզվելով:

---

[1] Григорян 2018, 7.
[2] Armenian pogroms in Azerbaijan.
[3] Улубабян 1990, Улубабян и др. 1989, 55, Еганян 2000, Armenian pogroms in Azerbaijan.

Սումգայիթի ջարդերն ուղեկցվել են կանանց, անգամ անչափահաս աղջիկների խմբային բռնաբարություններով[4]: Նույն պաշտոնական տվյալների համաձայն՝ անմարդկային դաժանությամբ կատարված բռնաբարությունների զոհ են դարձել այդպիսի հաղորդում ներկայացրած 16 կանանցից 12-ը. սկզբնական փորձաքննությամբ հաստատված է եղել միայն 2 դեպք[5]:

Ֆիզիկական բռնությունների են ենթարկվել նաև Սումգայիթում կարգուկանոն հաստատելու նպատակով տեղակայված զինվորական անձնակազմի 276 զինծառայողներ[6], որոնց հաջողվել է ողջ մնալ[7]:

2) Գույքային վնասներ

Սումգայիթի հայ բնակչության զանգվածային ջարդերը չեն սահմանափակվել միայն ֆիզիկական բռնություններով. մեծ վնաս է հասցվել նաև հայերին պատկանող գույքին: Մասնավորապես՝ ավերվել է 200-ից ավելի բնակարան, կատարվել են զանգվածային կողոպուտներ, բացի այդ, հարձակումների թիրախում են հայտնվել նաև հայկական մշակութային հաստատությունները[8]: Ավերվել, նաև այրվել են հայերին պատկանող կամ նրանց աշխատանքային վայր հանդիսացող 50 խանութ և կրպակ, 40-ից ավելի ավտոմեքենա[9]:

Սումգայիթի ջարդերի անուղղակի հետևանքները

1) Հայազգի փախստականների արտագաղթը

Սումգայիթի իրադարձություններից հետո Ադրբեջանից հայ փախստականների թիվը հասավ 175,000-ի[10]: Այն համալրվեց Ադրբեջանական ԽՍՀ-ում մնացած վերջին հայերով, երբ 1990 թ. հունվարին մայրաքաղաք Բաքվում տեղի ունեցած ցույցերի և զանգվածային բռնությունների կարգախոսներից մեկը դարձավ «Փա՛ռք Սումգայիթի հերոսներին»-ը[11]:

2) Ջարդերի հետագա շարունակությունը

Սումգայիթի ջարդերի ժամանակ իրավապահ մարմինների անգործությունը, Ադրբեջանական ԽՍՀ-ի և ԽՍՀՄ կենտրոնական իշխանութ-

---

[4] Улубабян и др. 1989, 9, Григорян 2018, 7, Zurcher 2009, 159.
[5] Улубабян и др. 1989, 20, 29.
[6] Улубабян и др. 1989, 20.
[7] Мостовой 1988.
[8] Zurcher 2009, 159, Armenian pogroms in Azerbaijan.
[9] Лошак 1988, Григорян 2018, 7.
[10] Zurcher 2009, 167.
[11] Armenian pogroms in Azerbaijan. Chorbajian 2001, 45.

յունների կողմից իրադարձությունների ոչ միանշանակ որակումն ու դատապարտումը հանգեցրին հայերի ջարդերի շարունակությանը Ադրբեջանի այլ քաղաքներում[12]: Մասնավորապես՝ ջարդեր տեղի ունեցան 1988 թ. նոյեմբերին Կիրովաբադում (Գանձակ) և 1990 թ. հունվարին Բաքվում:

3) Լեռնային Ղարաբաղի հակամարտության անցումը պատերազմական փուլի

Սումգայիթի ջարդերը դարձան Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հակամարտության անդառնալիության կետը: Սումգայիթը վերջնականապես վերացրեց հայերի և ադրբեջանցիների հնարավոր համակեցության վերաբերյալ պնդումներ կատարելու հիմքերը[13]՝ հետագա տարիներին պատճառ դառնալով պատերազմի և ռազմական արյունալի բախումների:

Սումգայիթի ջարդերի դատապարտումը

ԽՍՀՄ-ի զանգվածային լրատվական միջոցները քննադատող հրապարակային խոսքով է հանդես եկել նաև դատախազության՝ Սումգայիթի գործով քննչական խմբի անդամ Վ.Ա. Ռևան՝ պնդելով, որ ՀԼՄ-ների՝ «Սումգայիթի ցեղասպանության» պատշաճ և ժամանակին լուսաբանման դեպքում հնարավոր կլիներ խուսափել իրադարձությունների հետագա զարգացումից[14]:

Դեռևս 1989 թ. հունվարին ադրբեջանցի պատմաբան Զիյա Բունիաթովը պնդում էր, որ Սումգայիթի ջարդերը կազմակերպել են հենց հայերը՝ վարկաբեկելու համար Ադրբեջանին, ինչպես նաև հիմնավորելու իրենց ազգայնականությունը[15]: Արդեն 1990 թ. հայտնվեց ադրբեջանական մեկ այլ դրույթ, որի հիմքը Դավուդ Իմանովի «Սումգայիթի արձագանքը» ֆիլմն էր: Ֆիլմում Սումգայիթի ջարդերի կազմակերպման մեջ մեղադրվում էին հայերը, ռուսները և ամերիկացիները, որոնք այդ եղանակով փորձում էին կործանել Խորհրդային Միությունը[16]:

Հայերի՝ Սումգայիթում սեփական ջարդերի կազմակերպման անտրամաբանական դրույթի միակ փաստական հիմքը հանցագործություններին Էդուարդ Գրիգորյան անունով անձի ակտիվ մասնակցությունն էր:

---

[12] Armenian pogroms in Azerbaijan.
[13] Zurcher 2009, 155-156.
[14] Karabakh Records.
[15] Буниятов 1989.
[16] De Waal 2013, 42-43, Laitin and Suny 1999, 145.

Նշենք, որ Սումգայիթի ցույցերին մասնակցել են հազարավոր, ջարդերին՝ առնվազն հարյուրավոր մարդիկ. այդ հիմքով ձերբակալվել է 84 անձ (82 ադրբեջանցի, մեկական՝ հայ և ռուս[17]): Այսպիսով, ժխտողականությունը առանց ապացույցներով հիմնավորելու դրվել է Ադրբեջանի իշխանությունների քաղաքականության հիմքում, որն էլ պաշտոնական մակարդակով շարունակվում է ցայսօր[18]:

Չնայած վերոշարադրյալ հակագիտական վարկածներին՝ Սումգայիթի ջարդերի վերաբերյալ դեռևս ԽՍՀՄ-ի տարիներին իրականացվել են գործերի նախաքննություններ, դատաքննություններ, և ընդունվել են անհատների մեղավորությունը հիմնավորող դատավճիռներ: Հատկանշական է, որ քրեական գործեր են հարուցվել նաև ոստիկանության աշխատակիցների նկատմամբ[19]:

Այնուամենայնիվ, նշված դատահիրավական գործընթացների օբյեկտիվության, բազմակողմանիության և լրիվության վերաբերյալ ևս առկա են հիմնավոր մտահոգություններ: Մասնավորապես՝ իբրև թե քրեական գործերի քննության առավելագույն օբյեկտիվությունն ապահովելու համար որոշում է ընդունվել Սումգայիթում տեղի ունեցած ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունը փոխանցել ՌԽՖՍՀ-ի դատական մարմիններ, այդ թվում՝ ԽՍՀՄ Գերագույն դատարան, Վորոնեժի, Կույբիշևի, Վոլգոգրադի դատարաններ. մնացած քրեական գործերը քննել է Ադրբեջանական ԽՍՀ-ի Գերագույն դատարանը[20]: Այսպիսով, նույն վայրում նույն ժամանակ նույն՝ ազգային թշնամանքի շարժառիթով իրականացված՝ բնույթով նույնական հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը բաժանվել են 80՝ «խուլիգանական դրդումներով» կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերի[21]: Բնականաբար, նման պարագայում չէր կարող հնարավոր լինել դրանց օբյեկտիվ քննության ապահովումը՝ նաև այն պատճառով, որ գործերով վկաները, տուժողները և վերջիններիս իրավահաջորդները չէին կարող միաժամանակ ներկա լինել տարբեր քաղաքներում անցկացվող բոլոր դատական նիստերին: Միևնույն ժամանակ, ջարդերից հետո Ադրբեջանում քննվող գործերով,

[17] De Waal 2013, 42-43.
[18] https://science.gov.az/en/news/open/609
[19] Улубабян и др. 1989, 24.
[20] Улубабян и др. 1989, 8, 57.
[21] Armenian pogroms in Azerbaijan.

առհասարակ, դժվար է պատկերացնել հայազգի անձանց մասնակցությունը դատաքննության գործընթացին: Այսինքն՝ առկա էր արդարադատության հասանելիության հետ կապված ակնհայտ խնդիր:

Նշենք նաև, որ քրեական գործերով տուժողների և տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչները բազմաթիվ դրվագներով ներկայացրել են տվյալներ, որոնք վկայում են դատական գործերի փաստացի ոչ օբյեկտիվ քննության մասին: Դրանք են՝ հարցաքննության ընթացքում թարգմանչի՝ փաստերի կողմնակալ աղավաղումը և այդ հիմքով թարգմանչին ներկայացված բացարկի միջնորդության մերժումը դատարանի կողմից[22], հանցագործությունների ակնհայտ փոխկապվածության դեպքում դրանք միավորելու և այլ հանցակազմերի շրջանակներում դիտարկելու հարցում թույլ տրված օրենսդրական խախտումները[23], վկաների և հանցագործների՝ նախաքննության ընթացքում իրենց իրավունքների կոպիտ խախտումների մասին պնդումները, վկաների՝ զանգվածաբար իրենց տված և ստորագրած ցուցմունքներից հրաժարվելը[24], վերջիններիս հետապնդումները[25], չնայած ապացույցներին՝ հանցագործությունների՝ միայն խուլիգանական դրդումներով իրականացված լինելու վերաբերյալ հարցում դատախազության և դատարանների դիրքորոշման անսասանությունը, դեպքերի նախապես նախապատրաստված լինելու մասին ապացույցների անտեսումը[26] և այլն:

Նշված քրեական գործերով մեղադրական եզրակացությունների և դատարանների որոշումների եզրափակիչ մասերից բխում է, որ Սումգայիթի հայերի սպանությունները եղել են զուտ խուլիգանական դրդումներով: Խուլիգանական դրդումների և նախաքննության ընթացքում չբացահայտված խուլիգանական խմբերի վերաբերյալ պնդումները պարբերաբար կրկնվում են դատախազության և դատարանների ընդունած դատական ակտերում[27]:

1988 թ. հուլիսի 18-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստի ընթացքում ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովը պնդել է, որ Սումգայիթի ջարդերին իրավական որակում տալիս «ցեղասպանու-

[22] Геворкян 1998, 37-38.
[23] Улубабян 1991.
[24] Геворкян 1998, 26, 29, 32, 36.
[25] Улубабян и др. 1989, 60.
[26] Улубабян и др. 1989, 15.
[27] Геворкян 1998, 6-7, 82, 87, Улубабян 1991, Марукян 2008, Григорян 2018, 8-12.

թյուն» եզրույթի կիրառումը սխալ է, քանի որ «ցեղասպանությունը որոշակի քաղաքականություն է՝ ռասայական, կազմակերպված, ոչ ինքնաբուխ. իսկ Սումգայիթում մոլեգնել են հասարակության տականքները»[28]: Նույն նիստի ընթացքում Գորբաչովը նշել էր, որ ողբերգությունից հնարավոր կլիներ խուսափել, եթե զինվորական ուժերը չուշանային երեք ժամով: Սումգայիթի դեպքերի վերաբերյալ թեկուզ մակերեսային տվյալների հավաքման դեպքում ակնհայտ կդառնա, որ դրանք չեն իրականացվել երեք ժամում, իսկ զինծառայողների ներկայությունը ջարդերի ընթացքը չի կասեցրել[29]:

Այսպիսով, Սումգայիթի ջարդերը միայն խուլիգանական դրդումներով իրականացված բռնություններ որակելու հարցում ԽՍՀՄ-ի քաղաքական ղեկավարության, նախաքննության և դատական մարմինների դիրքորոշումները համընկնում էին:

Նման պայմաններում դատավարական ակտերի բովանդակության ուսումնասիրությունն ուղղակի հակասության մեջ է իրավական փաստարկման սկզբունքների հետ: Մասնավորապես՝ նախաքննությունն իրականացրած մարմինները և դատարանները, հիմնավորված համարելով ազգային ատելության շարժառիթի առկայությունը հանցագործությունների հիմքում, առանց որևէ հիմնավորման խուսափում են դրանց իրավական ճշգրիտ որակումից: Որպես նշվածի ապացույց՝ բավարար է մեջբերել Ահմեդովի գործով մեղադրական եզրակացությունից մի հատված, համաձայն որի՝ «1988 թ. փետրվարի 29-ին՝ ժամը 16-ի սահմաններում, Սումգայիթի ավտոկայանի տարածքում Ահմեդովը մասնակցել է ինքնաբուխ հավաքին: Վերջինս բարձրախոսով կոչ է արել հաշվեհարդար իրականացնել ազգությամբ հայ քաղաքացիների նկատմամբ»[30]: Նույն գործով դատական նիստի ընթացքում դատախազը նշել է, որ չկա կասկած առ այն, որ սպանություններն իրականացվել են ազգային ատելության շարժառիթով, առանց տուժողների հետ որևէ միջանձնային հարաբերությունների առկայության՝ հավելելով նաև, որ, ըստ նախաքննության մարմնի, այն մեկտեղվել է խուլիգանական դրդումների հետ[31]:

Ազգային ատելության շարժառիթը հաստատված է համարել նաև Ադրբեջանական ԽՍՀ-ի Գերագույն դատարանը՝ նշելով, որ դատական

[28] Улубабян 1990, Сумгаит – на суд истории.
[29] Улубабян и др. 1989, 17-18.
[30] Геворкян 1998, 72.
[31] Геворкян 1998, 82.

գործով ապացուցվել է ամբաստանյալների կողմից հայերի նկատմամբ հանցագործություններ կատարելու եղանակով ազգային թշնամանքի հարուցման փաստը[32]: Հանցագործությունների սուբյեկտիվ կողմի վերաբերյալ նշված ձևակերպումները հաստատել է նաև Վորոնեժի մարզային դատարանը[33]:

Սումգայիթի ջարդերից հետո դատապարտվել է 90 անձ մեծամասնությունը դեռահասներ կամ երիտասարդներ[34]: Համաձայն Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ և նախկին փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոկսի՝ 1993 թ. մարտի 2-ին Ադրբեջանի դատախազի գրասենյակը հայտարարել է, որ վերջինս նախագահ Էլչիբեյին առաջարկել է համաներում շնորհել Սումգայիթում հայերի դեմ կատարված հանցագործությունների համար դատապարտված անձանց: Նույն օրը Ադրբեջանի խորհրդարանում առաջարկ է ներկայացվել համաներում շնորհել 1993 թ. մայիսի 28-ին՝ Ադրբեջանի առաջին հանրապետության հիմնադրման 74-րդ տարեդարձի օրը[35]:

Սումգայիթում հայերի ջարդերին անդրադարձել է նաև Եվրոպական խորհրդարանը՝ Հայաստանի շրջափակման վերաբերյալ բանաձևում: Բանաձևում նշվում է, որ Սումգայիթում և Բաքվում հայերի ջարդերի հետևանքով Ադրբեջանից Հայաստան է գաղթել 300,000 հայ փախստական, որոնք ծայրահեղ անապահով վիճակում են և ունեն շտապ օգնության կարիք[36]:

Եզրակացություններ

Սումգայիթի իրադարձությունների ճշգրիտ որակումն ու դատապարտումը հնարավոր նվազագույնն էին, որ կարելի էր անել ջարդերի կանխարգելման և դրանց հետևանքների վերացման հարցերում կենտրոնական իշխանությունների ձախողումներից հետո: Չնայած դրան՝ Սումգայիթի ջարդերը մինչև օրս շարունակում են մնալ ադրբեջանական իշխանությունների ժխտողականության օբյեկտ, իսկ տեղի ունեցածի իրավական որակումներն ու դատապարտվածության աստիճանը՝ ոչ ամբողջական:

---

[32] Приговор судебной коллегии по уголовным делам по I инстанции Верховного суда Азербайджанской ССР 1989.

[33] Приговор Воронежского областного суда по делу Мехдиева, Рзаева, Турабиева 1988.

[34] Armenian pogroms in Azerbaijan.

[35] Cox, Eibner 1998.

[36] Resolution on the blockade of Armenia and the human rights situation there 1991.

Ներկայացված փաստական տվյալները բավարար են պնդելու, որ 1988 թ. ադրբեջանական Սումգայիթ քաղաքում և այլ բնակավայրերում կատարվել են միջազգային քրեական իրավունքով դատապարտելի արարքներ: Մասնավորապես՝ ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածը սահմանում է ցեղասպանության հանցագործության հանցակազմի տարրերը[37]:

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1946 թ. 96 (1) բանաձևը սահմանում է, որ ցեղասպանությունը մարդկային ամբողջական խմբերի գոյության իրավունքի ժխտումն է, ինչպես սպանությունը առանձին մարդկանց կյանքի իրավունքի մերժումն է[38]: Ի տարբերություն մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների՝ ցեղասպանության հանցակազմի օբյեկտիվ կողմը չի բնութագրվում գործողությունների մասշտաբով կամ ծավալով: Չնայած դրան՝ միջազգային քրեական դատարանները հանգել են հետևության, որ ցեղասպանությունը պետք է վերապահվի միայն բացառիկ ծանրության և մեծության գործողությունների համար, որոնք ցնցում են մարդկության խիղճը[39]:

Ներկայացված իրավական վերլուծությունից և պատմական տվյալների համադրումից բխում է, որ 1988 թ. փետրվարին Սումգայիթում տեղի ունեցած հանցագործությունները իրենց օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերով համապատասխանում են ցեղասպանության հանցակազմի տարրերին: Պետք է նաև նշել, որ դատարանները և տրիբունալները հաճախ զգուշավորություն են դրսևորում արարքները որպես ցեղասպանություն որակելիս՝ այդ կերպ որակելով միայն բացառիկ դեպքերը:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է դիտարկել նաև մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները: Միջազգային քրեական դատարանի վերաբերյալ 1988 թ. ընդունված Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածը նախատեսում է մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների հանցակազմը[40]:

Մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտիվ կողմի հատկանիշների և Սումգայիթի քննարկվող իրադարձությունների ներկայացված փաստակազմի համադրմամբ և վերլուծությամբ պետք է ար-

---

[37] UN General Assembly 1948, Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide.

[38] UN General Assembly 1946, The Crime of Genocide.

[39] ICTY 1996, 15-16.

[40] UN General Assembly 1998, Rome Statute of the International Criminal Court.

ձանագրել, որ նույնիսկ այն դեպքում, եթե վկայակոչված փաստերը չեն ապացուցում ջարդարարների մեջ ցեղասպանական մտադրության առկայությունը, ապա տվյալ հանցագործությունները առնվազն համապատասխանում են մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների հանցակազմին:

Գրականություն

Буниятов З. 1989, «Почему Сумгаит?», Известия Академии наук Азербайджанской ССР, Серия истории, философии и права, N 2, январь, с. 9-18.

Геворкян П.С. 1998, Дневник судебного процесса о преступлениях против армянского населения Сумгаита, Степанакерт, Издательский центр Степанакертского полиграфпредприятия, 87 с.

Григорян М. 2018, Сумгаит: говорят свидетели-азербайджанцы, Ереван, Центр общественных связей и информации, 136 с.

Еганян А. 2000, Увидеть свет в черный день погрома, Армянский вестник, N 1-2, https://karabakhrecords.info/publication_articles_chernyj-den-pogroma.html (дата верификации 21.12.2021).

Лошак В. 1988, «Сумгаит. Эпилог трагедии», Москва, «Московские новости», N 21, https://karabakhrecords.info/publication_articles_sumgait-epilog-tragedii.html (дата верификации 21.12.2021).

Марукян А.Ц. 2008, Правовые аспекты проявления геноцида армян на территории Азербайджана в 1988-1990 гг. на примере Сумгаита, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ. «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, N 9, էջ 279-287:

Мостовой А. 1988, Резня. О событиях в г. Сумгаит (февраль 1988 г.), http://sumgait.info/sumgait/mostovoy/sumgait-mostovoy.htm (дата верификации 21.12.2021).

Приговор Воронежского областного суда по делу Мехдиева, Рзаева, Турабиева, 20 декабря 1988 г. http://karabakhrecords.info/documents_court_prigovor-voronezhskogo-oblastnogo-su.html (дата верификации 21.12.2021).

Приговор судебной коллегии по уголовным делам по I инстанции Верховного суда Азербайджанской ССР, 28 марта 1989 г., http://karabakhrecords.info/documents_court_prigovor-3-goda.html (дата верификации 21.12.2021).

Улубабян Г. Б. 1991, Сумгаит: «Народу нужна вся правда», Литературная Армения, N 4, Ереван, с. 95-105, http://karabakhrecords.info/publication_articles_sumgait_narod_pravda.html (дата верификации 21.12.2021).

Улубабян Г.Б. 1990, В Сумгаите погибло 32 человека. Ложь! Газета «Эпоха», сентябрь, N 4, Москва, http://sumgait.info/press/epokha/epokha-9009_N4.htm (дата верификации 21.12.2021).

Улубабян Г.Б. 1990, Сумгаит – на суд истории, «Коммунист», Ереван, 15 июня, http://sumgait.info/press/golos-armenii/golos-900615.htm (дата верификации 21.12.2021).

Улубабян Г.Б. и др. 1989, Сумгаит... Геноцид... Гласность? Ереван, Общество «Знание» Армянской ССР, 63 с.

Armenian pogroms in Azerbaijan 1988-1990, http://www.nkr.am/en/armenian-pogroms?fbclid=IwAR2wEgnYqSpjsgP1wvlkDInJt4nudwKvDrrYsj7Ju6omMNH8JwlHg9cvLfs (дата верификации 21.12.2021).

Chorbajian L. 2001, The Making of Nagorno-Karabagh, London, Palgrave Macmillan.

Cox C., Eibner J. 1998, Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh, Institute for Religious Minorities in the Islamic World, http://sumgait.info/caroline-cox/ethnic-cleansing-in-progress/karabakh-question-revived.htm (дата верификации 21.12.2021).

de Waal T. 2013, Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War, New York, NYU.

European Parliament, Resolution on the blockade of Armenia and the human rights situation there, 14 March 1991, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=OJ:C:1991:106:FULL&from=EN (дата верификации 21.12.2021).

ICTY T. Ch., Karadžic′ and Mladic′ (transcript of hearing) 27.06.1996 at 15-16.

Karabakh Records, Следователь следственной группы прокуратуры бывшего "СССР" В.А. Рева рассказывает о сумгаитских погромах, https://www.facebook.com/KarabakhRecords1988/videos/485025385502874/ (дата верификации 21.12.2021).

Laitin D., Suny R. 1999, Karabakh: Thinking a Way out of Karabakh, Middle East Policy, 7 (1) 145-176.

UN General Assembly, Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, 9 December 1948, United Nations, Treaty Series, vol. 78, p. 277, available at: https://www.refworld.org/docid/3ae6b3ac0.html (accessed 25 January 2022).

UN General Assembly, Rome Statute of the International Criminal Court (last amended 2010), 17 July 1998, ISBN No. 92-9227-227-6, available at: https://www.refworld.org/docid/3ae6b3a84.html (accessed 25 January 2022).

UN General Assembly, The Crime of Genocide, 11 December 1946, A/RES/96, available at: https://www.refworld.org/docid/3b00f09753.html (accessed 25 January 2022).

Zurcher C. 2009, The Post-Soviet Wars: Rebellion, Ethnic Conflict, and Nationhood in the Caucasus, New York and London, New York University Press, 308 p.

ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՋԱՐԴԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ

Նարեկ Շարաֆյան

Ամփոփում

1988 թ. փետրվարի 27-29-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանական ԽՍՀ-ի Սումգայիթ քաղաքում հայ բնակչության նկատմամբ իրագործված զանգվածային ջարդերը (հայտնի է նաև որպես «Սումգայիթի պոգրոմ») ունեցել են խոր և տարաբնույթ հետևանքներ: Միևնույն ժամանակ, պատմական, քաղաքական և իրավական հարթություններում հաճախ է քննարկվում Սումգայիթում հայերի ջարդերի դատապարտվածության աստիճանը:

Սումգայիթի ջարդերը մինչև օրս շարունակում են մնալ ադրբեջանական իշխանությունների ժխտողականության օբյեկտ, իսկ տեղի ունեցածի իրավական որակումներն ու դատապարտվածության աստիճանը հնարավոր չէ համարել ամբողջական: Այդ ջարդերի վերաբերյալ պատմական տվյալները բավարար են՝ պնդելու համար, որ 1988 թ. Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում և այլ բնակավայրերում տեղի են ունեցել միջազգային քրեական իրավունքով դատապարտելի արարքներ: Սումգայիթում հայերի դեմ տեղի ունեցած հանցագործությունները՝ իրենց օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմով համապատասխանում են ցեղասպանության հանցակազմի, ինչպես նաև մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների տարրերին:

Բանալի բառեր՝ Սումգայիթ, ջարդեր, զանգվածային սպանություններ, ցեղասպանություն, մարդկայնության դեմ հանցագործություն, էթնիկ զտում, հայատյացություն:

ПОСЛЕДСТВИЯ МАССОВЫХ ПОГРОМОВ АРМЯН В СУМГАИТЕ И ОСУЖДЕНИЕ ВИНОВНЫХ

Нарек Шарафян

Резюме

27-29 февраля 1988 года в городе Сумгаит Азербайджанской ССР были совершены погромы и массовые убийства армянского населения,

известные как «Сумгаитский погром». Осуждение резни армян в Сумгаите часто является предметом обсуждений в политической и правовой сферах. Сумгаитский погром отрицается со стороны азербайджанских властей по сей день. Фактологические данные о сумгаитских погромах дают возможность утверждать, что преступления, осуждаемые международным уголовным правом, имели место в Сумгаите и других населенных пунктах Азербайджана в 1988 году. Преступления, совершенные против армян в Сумгаите, соответствуют составу преступлений, квалифицируемых как геноцид, а также преступлениям против человечности.

Ключевые слова – Сумгаит, погромы, массовые убийства, геноцид, преступления против человечности, этническая чистка, арменофобия.

THE CONSEQUENCES OF THE MASSACRES OF ARMENIANS IN SUMGAIT AND THE CONDEMNATION OF THE GUILTY

Narek Sharafyan

Abstract

On February 27-29, 1988, massacres of the Armenian population took place in the city of Sumgait (Sumqayit) in the Azerbaijani SSR (also known as the "Sumgait pogrom"). These events had profound and various consequences. At the same time, the degree of condemnation of the anti-Armenian massacres of Sumgait is often discussed in the historical, political and legal fields. The Sumgait pogrom continues to be an object of denial by the Azerbaijani authorities, and the legal qualifications and the degree of condemnation of the events cannot be considered complete. Historical data on the Sumgait massacres are sufficient to claim that crimes defined by the international criminal law took place in Sumgait and other settlements of Azerbaijan in 1988. The crimes committed against the Armenians in Sumgait correspond to the elements of the crime of genocide, as well as the crimes against humanity both with their objective and subjective aspects.

Key words – Sumgait, pogroms, massacres, genocide, crimes against humanity, ethnic cleansing, Armenophobia.